



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

« 17 » 12 2018թ № 1116-ՆԸ

«ԱՆ-ԱՐՏ ԴԱՅՄՈՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ (ԱՏԳ ԱԱ) ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 710210000, 710221000,  
710231000 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԲՆԱԿԱՆ՝ ՄՇԱԿՎԱԾ ԿԱՄ ՉՄՇԱԿՎԱԾ, ԲԱՅՑ  
ՉՇՐՋԱՆԱԿՎԱԾ ԿԱՄ ՉԱՄՐԱՑՎԱԾ ԱԼՄԱՍՆԵՐԻ ԱՌՔ ԵՎ ՎԱՃԱՌՔ, ՆԵՐՄՈՒԾՈՒՄ,  
ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ՓՈԽԱԴՐՈՒՄ» ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ  
ԶԲԱՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 7-րդ և 13-րդ մասերով,  
ինչպես նաև հիմք ընդունելով «ԱՆ-ԱՐՏ ԴԱՅՄՈՆԴ» սահմանափակ  
պատասխանատվությամբ ընկերության կողմից 2018 թվականի դեկտեմբերի 11-ին  
ներկայացված դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԱՆ-ԱՐՏ ԴԱՅՄՈՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
կողմից իրականացվող «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային  
անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին  
դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված  
ալմաստների առք և վաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում» ծանուցման ենթակա  
գործունեությամբ զբաղվելու իրավունքը դադարեցնել՝ համաձայն «ԱՆ-ԱՐՏ ԴԱՅՄՈՆԴ»  
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված դիմումի,

հաշվառման համարը՝ ԹՔ020 առ 19.12.2017թ., գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ա.  
Հովհաննիսյան փող. 20/14:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ սույն հրամանն ուժի մեջ  
մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության  
վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:



ՏԻԳՐԱՆ ԽԱՂԱՏՐՅԱՆ